ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Պրովիզ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Արմ ընդ Ար ՍՊԸ	Կոստյումը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից: Կոստյումը պետք է կարված լինի սև գույնի բամբակյա կամ կիսաբամբակյա կտորից, բամբակի բաղադրությունը՝ ոչ պակաս 70% իսկ խտությունը՝ 210-240 գ/մ2: Բաճկոնը պետք է ունենա 3 վրադիր գրպան, որից երկուսը կողային հատվածում, մուտքը թեք, մեկը՝ ձախ կրծքավանդակի հատվածում ուղիղ, կրծքավանդակի գրպանի վերին մասում պետք է կարված լինի լրացուցիչ վրադիր կտոր՝ նախատեսված «անուն, ազգանվան» համար: Օձիքը՝ շրջվող, թևքերը՝ երկկարանի, օղակ կոճակով կոճկվող թեզանիքով, հետևամասը՝ վերին կտրվածքով: Բաճկոնը կոճկվում է կոճակներով: Բաճկոնի գոտկատեղը մշակվում է գոտիով, որի վրա կարվում է չափը կարգավորող ախլակ, 1 օղակ 2 կոճակով: Տաբատի ուրվագիծը՝ ուղիղ, կողքային վրադիր գրպաններով, մուտքը թեք: Տաբատի դիմացի հատվածում փողքերի ամբողջ երկարությամբ բարակ կարվածքով: Գոտկատեղում մշակված է գոտին՝ կամրջակներով, կոճկվում է մեկ օղակ կոճակով, գուլֆիկը 3 օղակ կոճակով: Գոտու վրա տեղադրված է չափսի կարգավորման 2 ախլակ 1 օղակ 2 կոճակով: Կեպին բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովհարից: Ետևի հատվածում չափսի կարգավորման հնարավորությամբ: Յուրաքանչյուր հագուստի կոմպլեկտ պետք է ունենա բաճկոնի ներսի կողմում կարված պիտակ

		ՔԿԾ գրառմամբ: Հագուստի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը: Հանդերձանքի նմուշը համաձայնեցնելուց հետո Գնորդի կողմից Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ կոստյում: Հակերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Провиз в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
2		